ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«11» 02 2022թ.
No ՀԳ-272

«ԱԿՎԱՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ Կոտայքի մարզ, Բալահովիտ, 42 փող., 2-րդ փկղ., թիվ 2)

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի փետրվարի 8-ի ««Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 43-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 43-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00046/22 վարույթը:

«Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ընկերության հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝

1. Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» բառերով մակնշված ապրանքների անվանացանկը և դրանցից յուրաքանչյուրի պիտակը կամ լուսանկարը, որը կպարունակի պիտակին առկա ողջ տեղեկատվությունը,

2. Ընկերության կողմից «աղբյուրի ջուր 0.5լ ապակյա շիշ», «Պէթ աղբյուրի ջուր» և «Պէթ աղբյուրի ջուր մշակված յոդով և սելենով» ապրանքների (այսուհետ նաև՝

Ապրանքներ), ինչպես նաև «աղբյուրի ջուր» բառերով մակնշված և շշալցված չգազավորված այլ ջրերի իրացման սկզբնաժամկետների վերաբերյալ՝ նշելով ամսաթվերը,

3. Ընկերության կողմից 2020 և 2021 թվականներին Ապրանքների, ինչպես նաև «աղբյուրի ջուր» բառերով մակնշված և շշալցված չգազավորված այլ ջրերի իրացման ծավալների (բնեղեն արտահայտությամբ) և դրանցից յուրաքանչյուրի իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ տարիների (ոչ ամբողջական տարի արտադրված լինելու դեպքում՝ ըստ ամիսների) և ըստ ապրանքների:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Ընկերությունը թիվ 43-Ա որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Ընկերությանը վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով, ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման, մի քանի խախտումների դեպքում դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

6. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար

պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը կրում է Ընկերությունը:

7. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

Կից ներկայացվում է թիվ 43-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

competition.am կայքում հրապարակման օրը՝ 11 ապրիլի 2022 թվական:

Կատարող՝ Արեգ Հովհաննիսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (238)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 փետրվարի 2022 թվականի թիվ 43-Ա

«ԱԿՎԱՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2022 թվականի փետրվարի 8-ի նիստում, **քննարկելով** «Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ԳԳ-3061 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-3061 գրություն**) դիմել է Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ **ՊԵԿ**)՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում **«հանքային ջրեր և չքաղցրացրած, չքուրավետացված գազավորված խմիչքներ»** (ԱԴԳՏ 11.07.11) ապրանքային խմբին դասվող ապրանքների արտադրություն և «ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի)» (ԱՏԳ ԱԱ 2201) ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների ցանկը (անվանումը, կազմակերպաիրավական ձևը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական հասցեն, գործունեության վայրը և այլն), ինչպես նաև վերջիններիս կողմից նույն ժամանակահատվածում բնական խմելու ջրի և մանկական սննդի համար նախատեսված խմելու ջրի իրացման ծավալների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ի պատասխան **թիվ ԳԳ-3061 գրության, 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/71-6/82963** գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 01/71-6/82963 գրություն**) Հանձնաժողովին է տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած

ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների ներմուծում և արտադրություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից դուրս գրած հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 2022 թվականի հունվարի 12-ի գրությամբ Հանձնաժողովին է տրամադրել նույն ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների արտադրություն և ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից ՀԴՄ կտրոնների միջոցով կատարած գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ վերը նշված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է «աղբյուրի ջուր 0.5լ ապակյա շիշ», «Պէթ աղբյուրի ջուր» և «Պէթ աղբյուրի ջուր մշակված յոդով և սելենով» ապրանքներ:

Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությունից (այսուհետ նաև՝ Նախարարություն) հայցվել է տեղեկատվություն խմելու «բնական» և «աղբյուրի» (չգազավորված և ոչ հանքային) ջրերի ջրօգտագործման թույլտվություն ստացած տնտեսավարող սուբյեկտներին տրված ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ:

Նախարարության՝ 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 1/10.2.3/394 գրության ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունը չունի ջրօգտագործման թույլտվություն:

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2022 թվականի փետրվարի 1-ի թիվ 804 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) հնարավոր խախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով

ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 23-ի թիվ 45 որոշմամբ հաստատված «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» 044/2017 տեխնիկական կանոնակարգի (այսուհետ նաև՝ Տեխնիկական կանոնակարգ) 37-րդ կետի համաձայն՝ փաթեթավորված խմելու ջրի մակնշվածքում թույլատրվում է օգտագործել բառեր, որոնք բնութագրում են դրա բնական հանքաղբյուրներից ծագումը (օրինակ՝ «աղբյուրի», «հանքաղբյուրից» և այլն) միայն այն պայմանով, որ տվյալ ջուրն ունի համապատասխան ծագում և փաթեթավորվում է կամ առանց մշակման, կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն Տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 27-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական հանքային ջրի համար, և Տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 28-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական խմելու ջրի համար:

Տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետի համաձայն՝ բնական խմելու ջրի մակնշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա) «գազավորված» կամ «չգազավորված» բառը.

բ) ջրառի վայրի մասին տեղեկություններ (գետի, լճի կամ ջրային այլ օբյեկտի անվանումը).

գ) ընդհանուր հանքայնացումը (գ/լ կամ գ/դմ3).

դ) «հիմնական բաղադրություն» բառերը, այնուհետև նշվում են բնական խմելու ջրի քիմիական կազմի տարրերը և դրանց քանակի սահմանային (նվազագույն և առավելագույն) արժեքները (մգ/լ կամ մգ/դմ3).

ե) պահպանման պայմանները և բացելուց հետո պիտանիության ժամկետը՝ 5 լ և ավելի ծավալով սպառողական փաթեթվածքով բնական խմելու ջրի համար:

Տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետի 16-րդ պարբերությամբ բացահայտվում է բնական խմելու ջուր հասկացության իմաստը, այն է՝ մակերևութային ջրերից կամ ստորգետնյա ջրատար հորիզոններից ստացված ջուր, որը չի դասվում բնական հանքային ջրի շարքին, սկզբնական վիճակով համապատասխանում է Տեխնիկական կանոնակարգին և պահպանում է իր հաստատուն կազմը, իսկ 19-րդ պարբերությամբ՝ փաթեթավորված խմելու ջուր հասկացության իմաստը, այն է՝ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող խմելու ջուր, որը շշալցված է վաճառքի համար նախատեսված

փաթեթվածքի մեջ կամ վերջնական սպառողին իրացվող արտադրանքի առաջնային փաթեթվածքի համար նախատեսված փաթեթվածքի մեջ:

Տեխնիկական կանոնակարգի 26-րդ կետի համաձայն՝ բնական հանքային ջրի, բնական խմելու ջրի մշակման համար թույլատրվում է կիրառել մշակման այն եղանակները, որոնք այդ ջրի կազմում չեն փոփոխում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի և կալիումի), անիոնների (հիդրոկարբոնատի, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև կենսաբանական ակտիվ բաղադրիչների պարունակությունը և (կամ) հարաբերակցությունը, այդ թվում՝ Տեխնիկական կանոնակարգի 27-րդ և 28-րդ կետերով նախատեսված մշակման եղանակները:

Տեխնիկական կանոնակարգի 28-րդ կետի համաձայն՝ բնական խմելու ջրի համար թույլատրվում է կիրառել մշակման հետևյալ եղանակները՝

ա) երկաթի, մանգանի, ծծմբի, մկնդեղի միացությունների բաժանումը՝ օդով և (կամ) թթվածնով մշակելու միջոցով.

բ) լուծված ածխածնի դիօքսիդից ամբողջական կամ մասնակի ազատումը՝ բացառապես ֆիզիկական մեթոդներով.

գ) ածխածնի դիօքսիդով հագեցումը.

դ) ջերմաստիճանի նվազեցումը և (կամ) բարձրացումը.

ե) Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող քանակությամբ ի սկզբանե առկա տարրերի կամ ռադիոակտիվ տարրերի իզոտոպների նվազեցումը և (կամ) բաժանումը, այդ թվում՝ զտման կամ դեկանտացման միջոցով.

զ) ուլտրամանուշակագույն ճառագայթումը (ՈւՃ-վարակազերծումը).

է) օզոնավորումը:

Տեխնիկական կանոնակարգի 29-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար քլորի պատրաստուկների կիրառումը:

Տեխնիկական կանոնակարգի նշված կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ շշալցված ջրի պիտակին «բնական» և «աղբյուրի» մակնշումները թույլատրելի է միայն այն դեպքում, երբ տվյալ ջուրն ունի համապատասխան ծագում և փաթեթավորվում է կամ առանց մշակման, կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն Տեխնիկական կանոնակարգով թույլատրված եղանակներ, ընդ որում շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար արգելվում է քլորի պատրաստուկների կիրառումը:

Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 876-Ն հրամանով հաստատված «Խմելու ջրի մշակման ժամանակ ջրամատակարարման համակարգ ներմուծվող և առաջացող վնասակար քիմիական նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների (սթկ/նորմերը» վերտառությամբ հավելված 3-ով սահմանվում է, որ ազատ քլորով ջրի վարակազերծման դեպքում ջրի հետ դրա կոնտակտը պետք է լինի 30 րոպեից ոչ պակաս, կապված քլորով 60 րոպեից ոչ պակաս: Մնացորդային քլորի պարունակության հսկողությունն իրականացվում է մինչև ջրի ջրաբաշխիչ ցանց մղելը: Ջրում ազատ և կապված քլորի միաժամանակ առկայության դեպքում դրանց ընդհանուր կոնցենտրացիան

չպետք է գերազանցի 1,2 մգ/լ: Առանձին դեպքերում ՀՀՀ կենտրոնի համաձայնությամբ խմելու ջրում հնարավոր է թույլատրել քլորի ավելի բարձր կոնցենտրացիա:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշմամբ ապրանքների իրացումն այն դեպքում, երբ առկա չեն Ընկերության կողմից աղբյուրի ջրի ձեռքբերման վերաբերյալ տվյալներ, առերևույթ պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թ. փետրվարի 8
Երևան